ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԱՌԿԱ ԵՆ ԱՅՆՊԻՍԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ, ՈՐՈՆՔ ՎՏԱՆԳԵԼՈՒ ԵՆ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

26.11.2013 12:26

ՀՀ Փաստաբանների պալատի ակումբը և Ամերիկյան իրավաբանների ընկերակցության Հայաստանյան Գրասենյակը կազմակերպել էր հերթական համատեղ քննարկումը նվիրված ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի վերաբերյալ: Քննարկումը նվիրված էր մեղադրյալի, տուժողի, վկայի ցուցմունքի դեպոնացմանը և մեղադրյալին սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության ենթարկելուն: Միջոցառման մասնակիցները կարծում են որ այս օրենսգրքով նախագծով առաջարկվող որոշ լուծումներ վտանգելու են մեղադրյալի հիմնարար իրավունքների և ազատությունների իրականացումը:

Ակումբի նիստի մասնակիցները փաստել են, որ Նախագծի հեղինակները դուրս են եկել Հայեցակարգով առաջարկվող լուծումներից և այնպիսի նորամուծություն են մտցրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծում, որ նույնիսկ եվրոպացի փորձագետնեն են զարմանք հայտնել այդ լուծումների վերաբերյալ: Նշված լուծումները հակասում են ՄԻԵԿ-ի դրույթներին: Դեպոնացման ինստիտուտը կհանգեցնի նրան, որ ըստ էության գործեր քննող դատարանները դատավճռի հիմքում կդնեն մեղադրյալների, վկաների և տուժողների դեպոնացված ցուցմունքները: Պաշտպանական ինստիտուտը ըստ էության անելիք չի ունենա: Մեղադրյալները կզրկվեն ցուցմունք տալու իրավունքից և կլռեն, քանի որ դեպոնացված ցուցմունքի հակասող ցուցմունք տալու դեպքում մեղադրյալների նկատմամբ միևնույնն է մեղադրական դատավճիռ կկայացվի և դատապարտվելուց հետո նրանց նկատմամբ քրեական հետապնդում կիրականացվի սուտ ցուցմունք տալու համար:

Եթե մեղադրյալներն այս անգամ էլ նախկին գործով դեպոնացված ցուցմուքին հակասող ցուցմունք տան, ապա դրա համար նույնպես նրանց նկատմամբ քրեական հետապնդում կիրականացվի և այսպես շարունակ:

Բացի այդ նշված ինստիտուտի ներդրումը կծանրաբեռնի առանց այն էլ ծանրաբեռնված դատարանների աշխատանքը:

Անհրաժեշտություն է առաջանալու նոր դատավորների նշանակման:

Ակումբի նիստի մասնակիցները անդրադարձան նաև ձերբակալման թեմային, մասնավորապես անձին առանց կարգավիճակի և առանց պաշտպանի 6 ժամ անազատության մեջ պահելու մասին: Ընդ որում նախագծով , որոշ դեպքերում անձը զրկվել է այդ 6 ժամվա ընթացքում իր հարազատներին իր գտնվելու վայրի մասին տեղյալ պահելու մասին: Հետաքրքիր է, եթե մեղադրյալի հարազատները տեղյակ չլինեն, ով է ապահովելու մեղադրյալի պաշտպան ունենալու իրավունքը:

Ակումբի նիստի մասնակիցները հայտարարել են, որ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի ընդունումը լուրջ խնդիրներ է առաջացնելու ՀՀ-ում, վտանգվելու են մարդու հիմնարար ազատությունները և իրավունքները, ուստի հետողական պայքարելու են, որպեսզի նախագծի որոշ դրույթների չընդունվեն: Որոշվեց Նախագծի վերաբերյալ կազմակերպել ծավալուն քննարկումներ, քննարկումներին մասնակից դարձնել ԱԺ պատգամավորերի, դատահիրավական համակարգի ներկայացուցիչների, ՀՀ Մարդու իրավունք-ների պաշտպանին, ՀԿ -ների և այլն: Քննարկման ընթացքում հնչեցված տեսակետները և հիմնավորումները հարկ լինելու դեպքում ներառել ՀՀ Փաստաբանների պալատի կողմից ՀՀ ԱԺ ներկայցվելիք առաջարկություններում:

Նախորդ նորությունը: ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱԿՈՒՄԲՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաջորդ նորությունը: ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԱԿՈՒՄԲԻ ՆԻՍՏ

Առաջարկվող նորություններ

22.11.2013ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱԿՈՒՄԲՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

20.12.2013ՀԱՅ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱ

23.12.2013ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ

28.12.2013ԸՆԴՈՒՆՎԵԼ Է «ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԳՆԱՑՈՒՑԱԿ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՈՒՄԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })